Խլաթեցին։ Սակայն իւր նախորդի պէս նեղուելով այլազգիների արշաւանքներից և ստիպուած լինելով թողնել Սուխարայ ուխտը, նա հեռացաւ իւր առաջին ուսումնատեղին՝ այն է Բզնունեաց Արծկէ քաղաքի Դաստակ կամ Ցիպնայ անապատի Ստեփաննոս Նախավկայի վանքը։ Այստեղ անցրեց Գրիգոր իւր կեանքի մնացեալ օրերը՝ շարունակ նուիրուած լինելով գրական զբաղմունքների և բարեգործութեան և մեռաւ մարտիրոսական մահով՝ նահատակուելով քրդերից 27-ին մայիսի, 1425 թուին 75 կամ 80 տարեկան հասակում։[1]

Այս հաշուով Գր. Խլաթեցին պէտք է ծնուած լինի մերձաւորապէս 1350 թուականին, — իւր

---

1. Տե՛ս Առաքել (ըստ երեւութին՝ Սիւնեցի, աշակերտ Խլաթեցու) վարդապետի ճառը—«Նահատակութիւն Խլաթեցւոյ Գրիգոր Ծերենց վարդապետի» ձեռագիրը Ցայսմաւուրքից քաղած—«Նօտարք Հայոց» հատ. Ղեւոնդ վ. Փիրղալէմեան, Կ. Պոլիս, 1888, էջ 75—77։ Նոյն Առաքել Սիւնեցին իւր «Եղերերգութիւն ի մահ նահատակութեան Ծերենց Գրիգոր վարդապետի» չափաբերականում կոչում է իւր ուսուցչին նաեւ Գրիգորիոս Բզնունի։ («Հայերգ», Տէվկանց, Թիֆլիս, 1883, էջ 175—180։)—Տե՛ս Թումա Մեծոբեցի, Պատմ. Լանկթամուրայ, Փարիզ, 1860, էջ 14, 17, 41—43, 85։—Չամչեան, Պատմ. Հայոց, Գ. 451—452։